ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2024թ. թիվ 239-Ա

Ն. ՄԱՐԻԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156, 163 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի մարտի 29-ի թիվ 187-Ա որոշումը և հաշվի առնելով Ն.Մարիկյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նունե Մարիկյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը ս/թ մայիսի 7-ից 24-ը ներառյալ՝ 13 աշխատանքային օր:

2. Ն.Մարիկյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Էլիզա Այվազյանի վրա::

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

03/05/24

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. մայիսի 3
ք.Վանաձոր